ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հուլիսի 2021 թվականի N 93-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի N 62-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի 2021 թվականի հունիսի 1-ի «Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման մասին» N 62-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Համարել օրինական Մարատ Աշոտի Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 10-րդ փողոցի 37-րդ հասցեի բնակելի կառուցապատման հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0217-0034) ինքնակամ՝ 2020 թվականին կառուցած բնակելի տունը՝ 140,06 քառակուսի մետր, աստիճանավանդակը՝ 8,98 քառակուսի մետր, պարիսպը՝ 9,43 քառակուսի մետր, կիսանկուղը՝ 65,07 քառակուսի մետր և աստիճանավանդակը՝ 0,71 քառակուսի մետր արտաքին մակերեսներով:»:

2) որոշման 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Հաշվի առնելով, որ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ շինությունները կառուցվել է 2001 թվականի մայիսի 15-ից հետո, օրինականացման համար Գետամեջի համայնքապետարանի 900115000094 հաշվեհամարին վճարել 313 540 (երեք հարյուր տասներեք հազար հինգ հարյուր քառասուն) դրամ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվականի հուլիսի 13
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հուլիսի 2021 թվականի N 94-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 22.1 կետերի պահանջներով, հիմք ընդունելով Կարեն Ավանեսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Համարել օրինական Կարեն Յուրայի Ավանեսյանին պատկանող (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, տրված՝ 2021 թվականի հուլիսի 8-ին) Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 10-րդ փողոցի N 50 հասցեի բնակելի կառուցապատման հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0216-0042) 1985 թվականին ինքնակամ կառուցած այգետնակը՝ 107,44 քառակուսի մետր, զուգարանը՝ 1,82 քառակուսի մետր և պարիսպը՝ 1,82 քառակուսի մետր արտաքին մակերեսներով, քանի որ.

1) տվյալ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

2) դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

2. Հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար վճար չի գանձվում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվականի հուլիսի 19
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հուլիսի 2021 թվականի N 95-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի N 6-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի 2021 թվականի հունվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջի համայնքապետարանի կարիքների համար 2021 թվականին կատարվող գնումների պլանը հաստատելու մասին» N 6-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվականի հուլիսի 19
գ.Գետամեջ

Հավելված
[illegible]ոյքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի
[illegible]021 թվականի հուլիսի 19-ի N 95-Ա որոշման
«Հավելված
[illegible]ի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի
[illegible] թվականի հունվարի 18-ի N 6-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2021 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

Պատվիրատու՝ Գետամեջի համայնքապետարան

(ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման)՝ 207025

Ծրագիրը՝ Համայնքի 2021 թվականի բյուջեից իրականացվող

Անվանումը՝ Օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարում

Բաժին 01 Խումբ 1 դաս 1 ծրագիր 51

Միջանցիկ կոդը՝ ըստ CPV դասակարգման	Անվանումը	Գնման ձևը (ընթացակարգը)	Չափման միավորը		Քանակը	Ընդամենը ծախսերը /դրամ/
1	2	3	4	5	7	6
	Ապրանքներ					**3000000**
30197622	Թուղթ Ա4	ՄԱ	տուփ	2300	55	126500
30199420	Թուղթ նշումների համար, սոսնձվածքով	ՄԱ	տուփ	200	5	1000
30192121	Գրիչ գնդիկավոր	ՄԱ	հատ	100	42	4200
30192128	Գրիչ գելային	ՄԱ	հատ	100	15	1500
30197234	Թղթապանակ կոշտ կազմով մեծ (ռեգիստր)	ՄԱ	հատ	800	25	20000
30197232	Արագակար	ՄԱ	հատ	80	20	1600
22851100	Արագակար պլաստիկե	ՄԱ	հատ	450	30	13500
30197233	Թղթապանակ	ՄԱ	հատ	80	30	2400
30197231	Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	ՄԱ	հատ	1000	7	7000
30192710	սոսինձամատիտ գրասենյակային	ՄԱ	հատ	150	20	3000
24911300	սոսինձ՝ հեղուկ	ՄԱ	հատ	250	10	2500
22811130	տետր	ՄԱ	հատ	230	3	690
30197322	կարիչ, 20-50 թերթի համար	ՄԱ	հատ	850	1	850
30197100	կարիչի մետաղալարե կապեր մեծ	ՄԱ	հատ	250	2	500
30197111	կարիչի մետաղալարե կապեր փոքր	ՄԱ	հատ	80	5	400
30197112	կարիչի մետաղալարե կապեր միջին	ՄԱ	հատ	150	2	300
30234400	դիսկ DVD	ՄԱ	հատ	100	20	2000
30234300	դիսկ CD	ՄԱ	հատ	100	20	2000
30192125	մարկեր	ՄԱ	հատ	200	7	1400
30192160	սպիտակեցնող նյութ (շտրիխ)	ՄԱ	հատ	275	4	1100
30192100	ռետին	ՄԱ	հատ	100	3	300
30192130	մատիտ	ՄԱ	հատ	70	10	700
30192210	պոլիմերային ինքնակպչուն ժապավեն 48մմ x100մ	ՄԱ	հատ	250	6	1500
30192220	պոլիմերային ինքնակպչուն ժապավեն 19մմ x36մ	ՄԱ	հատ	50	10	500
30199232	ծրար Ա4	ՄԱ	հատ	50	20	1000
30199238	ծրար Ա6	ՄԱ	հատ	20	68	1360
30199230	ծրար Ա5	ՄԱ	հատ	30	30	900
39241141	դանակ՝ գրասենյակային	ՄԱ	հատ	150	2	300
09132200	Բենզին ռեգուլյար	ՄԱ	լիտր	340	200	68000
09132200	Բենզին ռեգուլյար	ՄԱ	լիտր	350	200	70000
09132200	Բենզին ռեգուլյար	ՄԱ	լիտր	370	300	111000
09132200	Բենզին ռեգուլյար	ՄԱ	լիտր	400	1877.5	751000
09132200	Բենզին ռեգուլյար	ՄԱ	լիտր	450	1113.3	501000
34351200	Տրանսպորտային նյութեր՝ անվադողեր	ՄԱ	հատ	50000	4	200000
33141129	Դիմակ	ՄԱ	հատ	30	500	15000
24451141	Ալկոգել	ՄԱ	հատ	1500	30	45000

33621641	Ախտահանող միջոց սփրեյ	ՄԱ	հատ	2000	20	40000
30211220	Համակարգիչ	ՄԱ	հատ	250000	1	250000
30237490	Մոնիտոր	ՄԱ	հատ	60000	1	60000
30237111	Հոսանքի անխափան սնուցման սարք	ՄԱ	հատ	50000	1	50000
30237111	Անխափան սնուցման սարքի մարտկոց	ՄԱ	հատ	10000	2	20000
30237112	Սնուցման բլոկ	ՄԱ	հատ	25000	1	25000
30232231	կոշտ սկավառակ	ՄԱ	հատ	60000	2	120000
30200000	Համակարգիչ	ՄԱ	լրակազմ	475000	1	475000
	Ծառայություն					**2513000**
66111200	Բանկային ծառայություններ	ՄԱ	դրամ	20000	1	20000
65211100	բնական գազ	ՄԱ	խմ	139	2518	350000
65310000	Էներգետիկ ծառայություններ	ՄԱ	կվտ/ժ	45	5555.5	250000
65200000	Գազսպառման համակարգի տեխ. Սպասարկում	ՄԱ	դրամ	30000	1	30000
64210000	Հեռահաղորդակցման ծառայություններ	ՄԱ	դրամ	228000	1	228000
72400000	Ինտերնետ	ՄԱ	դրամ	12500	12	150000
66511180	Ապահովագրական ծառայություններ	ՄԱ	դրամ	35000	1	35000
72261170	Համակարգչային ծառայություններ / ՀԾ/	ՄԱ	դրամ	120000	1	120000
79211180	Ներքին աուդիտի ծառայություններ	ՄԱ	դրամ	300000	1	300000
75110000	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	ՄԱ	դրամ	100000	1	100000
79411210	Գնումների համակարգման ծառայություն	ՄԱ	ամիս	30000	12	360000
79411220	Գնահատման ծառայություններ	ՄԱ	դրամ	70000	1	70000
50111130	Ավտոմեքենաների պահպանման և վերանորոգման ծառայություններ	ՄԱ	դրամ	450000	1	450000
50311120	Քարթրիջի լիցքավորում	ՄԱ	դրամ	3000	9	27000
50311120	Քարթրիջի թմբուկի փոխարինում	ՄԱ	դրամ	3000	5	15000
50311120	Համակարգչի վերանորոգում	ՄԱ	դրամ	8000	1	8000
	Աշխատանք					**1000000**
45231131	Համայնքապետարանի խմելու ջրագծի կառուցում	ՄԱ	դրամ	1000000	1	1000000
Ընդամենը						**6513000**
Անվանումը՝ Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ						
Բաժին 01 Խումբ 3 դաս 3 ծրագիր 51						
72261160	Համակարգչային ծառայություններ /ՀԿՏՀ.	ՄԱ	դրամ	72000	1	72000
72261160	Համակարգչային ծառայություններ / Վեկտոր Պլյուս	ՄԱ	դրամ	44000	1	44000
72411700	Դոմենային անվան	ՄԱ	դրամ	12000	1	12000
72411500	Հոսթինգի ծառայություններ	ՄԱ	դրամ	5000	1	5000
Ընդամենը						**133000**
Անվանումը՝ Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ						
Բաժին 01 Խումբ 6 դաս 1 ծրագիր 51						
	Ծառայություն					**550000**
90511240	Ջրատարների մաքրման ծառայություն	ՄԱ	դրամ	250000	1	250000
71250000	Չափագրման ծառայություն	ՄԱ	դրամ	300000	1	300000
	Ապրանք					**1000000**
45231215	Անվտանգության տեսախցիկների տեղադրում	ՄԱ	դրամ	1000000	1	1000000
Ընդամենը						**1550000**
Անվանումը՝ Քաղաքացիական պաշտպանություն						
Բաժին 02 Խումբ 2 դաս 1 ծրագիր 51						
75221200	Ծառայություններ քաղաքացիական պաշտպանության ոլորտում	ՄԱ	դրամ	10000	1	10000
Անվանումը՝ Պաշտպանություն/ այլ դասերին չպատկանող						
Բաժին 02 Խումբ 5 դաս 1 ծրագիր 51						
75220000	Ծառայություններ պաշտպանության ոլորտում	ՄԱ	դրամ	10000	1	10000
Անվանումը՝ Փրկարար ծառայություն						
Բաժին 03 Խումբ 2 դաս 1 ծրագիր 51						
75251500	Փրկարարական ծառայություններ	ՄԱ	դրամ	10000	1	10000
Անվանումը՝ Ճանապարհային տրանսպորտ						

Բաժին 04 Խումբ 5 դաս 1 ծրագիր 51						
	Ծառայություններ					0
	Աշխատանք					988900
45231187	Փողոցների ասֆալտապատում	ՄԱ	դրամ	988900	1	988900
Ընդամենը						988900
Անվանումը՝ Աղբահանում						
Բաժին 05 Խումբ 1 դաս 1 ծրագիր 51						
	Ծառայություն					1500000
90511150	Աղբահանություն	ԳՀ	ամիս	116667	12	1400000
90620000	Այլ ծառայություններ	ՄԱ	դրամ	100000	1	100000
Ընդամենը						1500000
Անվանումը՝ Փողոցային լուսավորություն						
Բաժին 06 Խումբ 4 դաս 1 ծրագիր 51						
65310000	Էներգետիկ ծառայություն	ՄԱ	դրամ	700000	1	700000
50231100	Փողոցային լուսավորության պահպանման ծառայություններ	ՄԱ	դրամ	400000	1	400000
45221142	վերանորոգում	ՄԱ	դրամ	988000	1	988000
45221142	Փողացային լուսավորության կառուցում/50%	ԳՀ	դրամ	3485000	1	3485000
45221142	Փողացային լուսավորության կառուցում/ սուբ. 50%	ԳՀ	դրամ	0	1	0
71351540	Տեխնիկական հսկողություն /50%	ՄԱ	դրամ	128500	1	128500
71351540	Տեխնիկական հսկողություն /սուբվեն. 50%	ՄԱ	դրամ	0	1	0
98111140	Հեղինակային հսկողություն /50%	ՄԱ	դրամ	38500	1	38500
98111140	Հեղինակային հսկողություն /սուբվեն.50%	ՄԱ	դրամ	0	1	0
71241200	Նախագծահետազոտական ծախսեր	ՄԱ	դրամ	360000	1	360000
50531140	Նախագծի փորձաքննություն	ՄԱ	դրամ	40000	1	40000
Ընդամենը						6140000
Անվանումը՝Այլ մշակութային կազմակերպություններ						
Բաժին 08 Խումբ 2 դաս 4 ծրագիր 51						
	Ապրանքներ					350000
39220000	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	ՄԱ	դրամ	200000	1	200000
18531100	Նվերներ	ՄԱ	հատ	1500	100	150000
	Ծառայություն					50000
50800000	Հուշարձանների պահպանման ծառայություններ	ՄԱ	դրամ	50000	1	50000
Ընդամենը						400000
Ընդհանուրը						17254900

»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հուլիսի 2021 թվականի N 96-Ա

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 139-րդ կետով և հիմք ընդունելով «Աթենք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիմումը՝ ***որոշում եմ.***

1. «Աթենք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը համայնք Գետամեջ 1-ին փողոց 6-րդ փակուղի թիվ 6 հասցեում գտնվող պահեստային մասի կառուցման շինարարական աշխատանքների ավարտման համար տալ շահագործման թույլտվություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվականի հուլիսի 20
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հուլիսի 2021 թվականի N 97-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշումով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 41-Ն որոշումը և հաշվի առնելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության լիազորված կազմակերպություն «Վոլիոս նախագծային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության դիմումը՝ ***որոշում եմ.***

1. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 2-րդ փողոցի 2-րդ փակուղու թիվ 2 հասցեում 0,4 կիլովատտ էլեկտրամատակարարման աշխատանքների կատարման շինարարության թույլտվություն՝ համաձայն հաստատված նախագծի (նախագծման փաթեթ՝ N 5274-ԷՄ):
2. Կառուցապատողը շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Գետամեջ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվական հուլիսի
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հուլիսի 2021 թվականի N 98-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքացիական պաշտպանության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի «ե)» կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի N 384-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետը՝ ***որոշում եմ.***

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի քաղաքացիական պաշտպանության համայնքային հետևյալ ծառայությունները.
1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի քաղաքացիական պաշտպանության առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման ծառայություն.
ա. ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է Գետամեջի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետը:
2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի քաղաքացիական պաշտպանության ինժեներական և տրանսպորտային ծառայություն.
ա. ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է Գետամեջի համայնքապետարանի վարորդը:
3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի քաղաքացիական պաշտպանության կոմունալ-տեխնիկական և էներգետիկայի ծառայություն.
ա. ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է Գետամեջ համայնքի ավագանու անդամ Ս. Ղազարյանը:
2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Գետամեջ համայնքի ղեկավարի տեղակալի վրա:
3. Որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Գետամեջ համայնքի ղեկավարը:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվականի հուլիսի 21
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հուլիսի 2021 թվականի N 99-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքացիական պաշտպանության մասին» օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի N 384-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ կետը, ինչպես նաև համայնքի բնակչության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների լիարժեք իրականացման նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի քաղաքացիական պաշտպանության համայնքային ծառայությունների կանոնադրությունները՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:
2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Գետամեջ համայնքի ղեկավարի տեղակալի վրա:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2021 թվականի հուլիսի 21
գ.Գետամեջ

Հավելված N 1

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի

Գետամեջ համայնքի ղեկավարի 2021 թվականի

հուլիսի 21-ի N 99-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ, ՍՆՆԴԻ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնադրությամբ կանոնակարգվում են «Քաղաքացիական պաշտպանության մասին» օրենքով նախատեսված քաղաքացիական պաշտպանության առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն) ստեղծումը, նախապատրաստումը և գործունեությունը:

II. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ, ՍՆՆԴԻ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ

2. Քաղաքացիական պաշտպանության առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման համայնքային ծառայությունը ստեղծվել է Գետամեջի համայնքապետարանում:

3. Քաղաքացիական պաշտպանության առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման համայնքային ծառայությունը ստեղծվել է համայնքի ղեկավարի որոշմամբ:

4. Քաղաքացիական պաշտպանության առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման ծառայությունը ստեղծվում է համապատասխան բազայի հիման վրա:

5. Ծառայությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» N 384-Ն որոշումով, քաղաքացիական պաշտպանության առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման ծառայության պետի ցուցումներով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

6. Քաղաքացիական պաշտպանության ծառայությունները ստեղծվում են համայնքի ղեկավարի որոշումով:

III. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ, ՍՆՆԴԻ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Քաղաքացիական պաշտպանության առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման ծառայության ընդհանուր խնդիրներն են՝

1) քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման պլանավորումը և իրականացումը.

2) քաղաքացիական պաշտպանության առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման ծառայության կազմավորումների ստեղծման, դրանց անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով ապահովման, պատրաստման և մշտական պատրաստականության վիճակում պահպանման կազմակերպումը.

3) ստեղծված իրադրության մասին իրական տեղեկատվության ստացման, վերլուծման և գնահատման կազմակերպումն ու քաղաքացիական պաշտպանության համապատասխան պետին փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.

4) առևտրի և սննդի ծառայության գծով՝ տուժած բնակչության, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում ընդգրկված կազմավորումների անձնակազմի՝ սննդամթերքով ու առաջին անհրաժեշտության այլ ապրանքներով և միջոցներով ապահովման կազմակերպումը, սննդամթերքի անվտանգության, որակի ու վարակվածության դիտարկման և հսկողության իրականացման կազմակերպումը.

5) նյութատեխնիկական մատակարարման ծառայության գծով՝ փրկարարական ու անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնող կազմավորումների նյութատեխնիկական անհրաժեշտ միջոցներով ապահովման կազմակերպումը:

IV. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ, ՍՆՆԴԻ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.Քաղաքացիական պաշտպանության առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման ծառայության ծառայության պետը՝

1) քաղաքացիական պաշտպանության առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման ծառայության պետին ներկայացնում են առաջարկություններ քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ստեղծման, կառուցվածքի, քանակի, համալրման և հագեցման վերաբերյալ.

2) տեղական ինքնակառավարման մարմիններում սահմանում են հսկողություն քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ստեղծման, նրանց համալրման, հագեցման գործընթացի նկատմամբ.

3) քաղաքացիական պաշտպանության առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման ծառայության պետին ներկայացնում են առաջարկություններ քաղաքացիական պաշտպանության ծառայության գործունեության բարելավման վերաբերյալ.

4) առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման ծառայության պետը իրականացնում է քաղաքացիական պաշտպանության կազմավորումների պատրաստականության պլանային և արտապլանային ստուգումներ.

5) առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման ծառայության պետը ցույց է տալիս մեթոդական և գործնական օգնություն աշխատանքների պլանավորման, միջոցառումների իրականացման գործում.
6) առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման ծառայության պետը տալիս է հանձնարարականներ համապատասխան ծառայություններին ու կազմավորումներին և իրականացնում հսկողություն դրանց կատարման նկատմամբ:
9. Քաղաքացիական պաշտպանության առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման ծառայության պետը պատասխանատվություն է կրում ծառայության և ծառայության կազմավորումների պատրաստականության համար:

V. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ, ՍՆՆԴԻ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

10. Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների պատրաստականության գնահատումն իրականացվում է յուրաքանչյուր տարում անցկացվող քաղաքացիական պաշտպանության հրամանատարաշտաբային և շտաբային ուսումնավարժությունների ընթացքում:

11. Ծառայությունների անձնակազմը պատրաստվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման մասին» N 46-Ն որոշման համաձայն:

12. Ծառայության պետի քաղաքացիական պաշտպանության հիմնահարցերով ընդհանուր և մասնագիտացված ուսումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման ինստիտուտում՝ 3 տարին մեկ անգամ:

VI. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ, ՍՆՆԴԻ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

13. Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ընդհանուր ղեկավարումն իրականացնում է համայնքի ղեկավարը:
14. Քաղաքացիական պաշտպանության ծառայության պետերը նշանակվում են քաղաքացիական պաշտպանության համապատասխան պետերի կողմից:
15. Քաղաքացիական պաշտպանության ծառայության ընթացիկ ղեկավարումն իրականացնում է ծառայության պետը:

Հավելված N 2

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի

Գետամեջ համայնքի ղեկավարի 2021 թվականի

հուլիսի 21-ի N 99-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնադրությամբ կանոնակարգվում են «Քաղաքացիական պաշտպանության մասին» օրենքով նախատեսված քաղաքացիական պաշտպանության ինժեներական և տրանսպորտային ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն) ստեղծումը, նախապատրաստումը և գործունեությունը:

II. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ

2. Քաղաքացիական պաշտպանության ինժեներական և տրանսպորտային համայնքային ծառայությունը ստեղծվել է Գետամեջի համայնքապետարանում:

3. Քաղաքացիական պաշտպանության ինժեներական և տրանսպորտային համայնքային ծառայությունը ստեղծվել է համայնքի ղեկավարի որոշմամբ:

4. Քաղաքացիական պաշտպանության ինժեներական և տրանսպորտային ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն) ստեղծվում է համապատասխան բազայի հիման վրա:

5. Ծառայությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» N 384-Ն որոշումով, քաղաքացիական պաշտպանության առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման ծառայության պետի ցուցումներով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

6. Քաղաքացիական պաշտպանության ծառայություններն ստեղծվում են պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ղեկավարների հրամաններով և որոշումներով:

III. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Քաղաքացիական պաշտպանության ինժեներական և տրանսպորտային ծառայության ընդհանուր խնդիրներն են՝

1) քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման պլանավորումը և իրականացումը.

2) քաղաքացիական պաշտպանության ինժեներական և տրանսպորտային ծառայության կազմավորումների ստեղծման, դրանց անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով ապահովման, պատրաստման և մշտական պատրաստականության վիճակում պահպանման կազմակերպումը.

3) ստեղծված իրադրության մասին իրական տեղեկատվության ստացման, վերլուծման և գնահատման կազմակերպումն ու քաղաքացիական պաշտպանության համապատասխան պետին փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.

4) ինժեներական ծառայության գծով՝

ա. հակառակորդի հարձակման վտանգի կամ հարձակման ժամանակ բնակչության պատսպարման նպատակով պաշտպանական կառույցների վաղօրոք նախապատրաստման, պահպանման, շահագործման և վերանորոգման միջոցառումների կազմակերպումը, պաշտպանական կառույցներին բնակչության ամրագրումը, քաղաքացիական պաշտպանության տեսանկյունից՝ բնակավայրերի, գործառնական այլ տարածքների գլխավոր հատակագծերում և մանրամասն հատակագծման նախագծերում հատուկ, կարևորագույն նշանակության օբյեկտների նպատակահարմար տեղաբաշխման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը, շենքերի, շինությունների, ինժեներական ցանցերի, հիդրոտեխնիկական կառույցների, տրանսպորտային հաղորդակցության ուղիների և մայրուղիների շինարարության անվտանգության ու հուսալիության ապահովման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների ինժեներական ապահովման կազմակերպումը.

բ. տրանսպորտային ծառայության գծով՝
բնակչության տարահանման, հիվանդների և տուժածների փոխադրման ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների տրանսպորտային ապահովման կազմակերպումը:

IV. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. Քաղաքացիական պաշտպանության ինժեներական և տրանսպորտային ծառայության ծառայության պետը՝
1) քաղաքացիական պաշտպանության ինժեներական և տրանսպորտային ծառայության պետին ներկայացնում են առաջարկություններ քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ստեղծման, կառուցվածքի, քանակի, համալրման և հագեցման վերաբերյալ.
2) տեղական ինքնակառավարման մարմիններում սահմանում են հսկողություն քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ստեղծման, նրանց համալրման, հագեցման գործընթացի նկատմամբ.

3) քաղաքացիական պաշտպանության ինժեներական և տրանսպորտային ծառայության պետին ներկայացնում են առաջարկություններ քաղաքացիական պաշտպանության ծառայության գործունեության բարելավման վերաբերյալ.
4) ինժեներական և տրանսպորտային ծառայության պետը իրականացնում է քաղաքացիական պաշտպանության կազմավորումների պատրաստականության պլանային և արտապլանային ստուգումներ.
5) ինժեներական և տրանսպորտային ծառայության պետը ցույց է տալիս մեթոդական և գործնական օգնություն աշխատանքների պլանավորման, միջոցառումների իրականացման գործում.
6) ինժեներական և տրանսպորտային ծառայության պետը տալիս է հանձնարարականներ համապատասխան ծառայություններին ու կազմավորումներին և իրականացնում հսկողություն դրանց կատարման նկատմամբ:
9. Քաղաքացիական պաշտպանության ինժեներական և տրանսպորտային ծառայության պետը պատասխանատվություն է կրում ծառայության և ծառայության կազմավորումների պատրաստականության համար:

V. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

10. Ծառայությունների անձնակազմը պատրաստվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման մասին» N 46-Ն որոշման համաձայն:

11. Ծառայության պետի քաղաքացիական պաշտպանության հիմնահարցերով ընդհանուր և մասնագիտացված ուսումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման ինստիտուտում՝ 3 տարին մեկ անգամ:

VI. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

12. Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ընդհանուր ղեկավարումն իրականացնում է համայնքի ղեկավարը:
13. Քաղաքացիական պաշտպանության ծառայության պետերը նշանակվում են քաղաքացիական պաշտպանության համապատասխան պետերի կողմից:
14. Քաղաքացիական պաշտպանության ծառայության ընթացիկ ղեկավարումն իրականացնում է ծառայության պետը: